



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

<< 18 >> հունիսի 2014 թ. N 152-Ղ

Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԴԵՍ <<ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրնագրի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Տեղեկատվական վերլուծական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 21-րդ կետով և հիմք ընդունելով Հ. Գասպարյանի (2014 թվականի հունիսի 16-ի մտ. N 3-1244) անձնական դիմումը, 2014թվականի հունիսի 18-ին կնքված N 55 աշխատանքային պայմանագիրը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հովիկ Գասպարյանին 2014 թվականի հունիսի 18-ից, ժամանակավորապես նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Տեղեկատվական վերլուծական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մրցութային կարգով տնօրենի նշանակումը, բայց ոչ ավել, քան վեց ամիս ժամկետով:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

3. Հ. Գասպարյանին և Հ. Ուրֆալյանին՝ սահմանված կարգով կատարել հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Փիրումյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ